Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
ռեկտոր, ԳԽ նախագահ
_____ Ն. Խ. Սարիբեկյան
«10» 04 2020թ

ԿԱՐԳ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԿԱԶՄԵԼՈՒ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առարկայական դասընթացի ուսումնական ծրագիրը հանդիսանում է իրականացվող մասնագիտական կրթական ծրագրի պարտադիր մաս: Դասավանդվող առարկայի նյութը, ուսումնական պարապմունքների տեսակները և ժամային բաշխվածությունը կանոնակարգող հիմնական ուսումնամեթոդական փաստաթուղթն է: Առարկայական դասընթացի ուսումնական ծրագիրը կազմվում է ըստ տվյալ առարկայի համար պետական չափորոշիչներով սահմանված նվազագույն պահանջների: Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ամբիոնների համար ուսումնական ծրագրի առկայությունը պարտադիր է տվյալ առարկայի (դասընթացի) ուսումնառությունը կազմակերպելու համար:

Ծրագիրը կազմվում է երկու օրինակից, մեկ օրինակը պահվում է ամբիոնում, երկրորդն՝ ուսումնական մասում: Ծրագիրը կարող է տեղադրվել նաև համալսարանի կայքէջում:

Ուսանողն իրավունք ունի ծանոթանալու հաստատված ծրագրի բովանդակությանը:

1. Առարկայական դասընթացի ծրագիրը պետք է.

- ✓ Բացահայտի ուսումնական նյութի և դասընթացի բովանդակությունը:
- ✓ Հնարավորություն ընձեռի ուսանողին ձեռքբերելու անհրաժեշտ գիտելիքներ, ունակություններ և կարողություններ:
- ✓ Ներառի տվյալ առարկայի ուսուցանման համար օգտագործվող մանկավարժական տեխնոլոգիաների արդիական ուղղություններ:
- ✓ Առարկային հատկացված ուսումնական ժամերի բաշխում՝ ըստ պարապմունքների տեսակների:

- ✓ Համապատասխանի առարկայի պետական չափորոշիչներով սահմանված նվազագույն պահանջներին:
- ✓ Անհրաժեշտ խորությամբ բացահայտի ուսումնական նյութի բովանդակությունը՝ հնարավորություն տալով ուսանողին ինքնուրույն ուսումնասիրելու տվյալ առարկան:
- ✓ Ապահովի տվյալ առարկայի բովանդակության անհրաժեշտ գիտական մակարդակը:
- ✓ Հնարավորություն տա որոշելու տվյալ առարկայի տեղը՝ կոնկրետ մասնագիտության համար ուսուցանվող առարկաների համալիրում:

2. **Առարկայական դասընթացի ծրագրերի կազմումը, ստուգումը և փորձաքննության իրականացումը:**

2.1. Առարկայական ուսումնական ծրագիրը կազմվում է առարկան դասավանդող առաջատար մասնագետի կողմից: Ծրագրեր կազմելիս ամբիոնի դասախոսները պետք է առաջնորդվեն պետական կրթական չափորոշիչներով, տվյալ մասնագիտության ուսումնական պլանով, ՀՀ կրթության և գիտության ոլորտին առնչվող օրենսդրությամբ և սույն կարգի դրույթներով:

2.2. Առարկայական ուսումնական ծրագրերը կազմելիս պետք է հաշվի առնել.

- ✓ Առարկայական դասընթացի բովանդակության համապատասխանությունը պետական չափորոշիչներում բերված պահանջներին:
- ✓ Ծրագրերի բովանդակության, այդ թվում նաև անհրաժեշտ ուսումնական գրականության, ժամանակակից (համացանց, էլեկտրոնային) պահանջների ապահովումը:
- ✓ <u>Բնագիտական և սոցիալ-տնտեսական կրթամասի առարկաների մասնագիտական ուղղվածությունը:</u>
- ✓ <u>Ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտացման առարկաների կապն այլ առարկաների հետ:</u>
- ✓ Տարբեր ուսումնական ծրագրերում առարկաների բովանդակության կրկնության կամ նմանակման բացառումը:
- ✓ Ինքնուրույն աշխատանքների տեսակների և թեմաների համապատասխանությունը երիտասարդ մասնագետներին ներկայացվող գիտելիքների, ունակությունների և կարողությունների համալիր պահանջներին:
- ✓ Միջանկյալ ստուգումների, վերջնական որակավորման և գիտելիքների գնահատման ձևերի համապատասխանությունը երիտասարդ մասնագետներին ներկայացվող պահանջներին:

2.3. Ծրագրի ստուգումը կատարում է ամբիոնի վարիչը, կամ նրա կողմից նշանակված առնվազն դոցենտի կոչում (կամ պաշտոն) ունեցող աշխատակիցը: Ստուգման արդյունքները քննարկվում են ամբիոնի նիստում: Ծրագիրը համարվում է ընդունված, եթե այն ունի արտաքին առնվազն մեկ մասնագետի դրական եզրակացություն, համապատասխանում է պետական կրթական չափորոշիչների պահանջներին, ուսումնական պլաններին և սույն կանոնակարգի դրույթներին: Հակառակ դեպքում ամբիոնի վարիչը, հիմք ընդունելով ստուգողի կամ ամբիոնի եզրակացությունը, լրացուցիչ ժամանակ է տրամադրում ծրագրի լրամշակման համար:

2.4. Ամբիոնի նիստի դրական եզրակացությամբ ընդունված ուսումնական ծրագիրն ուղարկվում է ֆակուլտետի խորհուրդ՝ քննարկելու և հաստատելու համար: Քննարկման արդյունքում բացահայտված թերությունները վերացնելու համար ծրագիրը կարող է վերադարձվել ամբիոն:

2.5. Ֆակուլտետի խորհրդում հաստատվելուց հետո ուսումնական ծրագիրը փոխանցվում է համալսարանի ուսումնական մաս՝ փորձաքննության և վերջնական հաստատման համար: Փորձաքննությունը կատարվում է ուսումնական ծրագրերի համապատասխանությունը նորմատիվային փաստաթղթերին ստուգելու նպատակով և իրականացնում է Որակի ապահովման և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորի կողմից նշանակված մասնագետը: Նորմատիվային փաստաթղթերին ծրագրի անհամապատասխանության դեպքում այն վերադարձվում է ամբիոն՝ լրամշակման համար:

2.6. Ուսումնական ծրագիրը համարվում է գործող Որակի ապահովման և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորի կողմից այն հաստատելուց հետո:

2.7. Ուսումնական ծրագրի կազմումը, փորձաքննության անցկացումն ու հաստատումը իրականացվում է ուսումնական գործընթացի սկզբից առնվազն 2 շաբաթ առաջ:

2.8. Անհրաժեշտության դեպքում ուսումնական ծրագիրը կարող է ենթարկվել շտկումների՝ գիտության տվյալ բնագավառի ժամանակակից ձեռքբերումներին առարկայի և նրա դասավանդման մեթոդիկայի համապատասխանեցման նպատակով:

2.9. Եթե տվյալ առարկայի համար առկա է ՀՀ ԿԳՄՍ նախարարության ուսումնամեթոդական բաժնի կողմից կազմված և երաշխավորված ծրագիր, ապա

դասախոսն իրավունք ունի օգտագործելու այն և նոր ծրագրի կազմումը պարտադիր չէ:

3. Առարկայական դասընթացի ծրագրի կառուցվածքը

3.1. Առարկայական ծրագիրը պետք է բացահայտի.

- Հիմնական կրթական ծրագրի հետ կապված առարկայի ուսուցման նպատակները, նրա տեղն ուսումնական գործընթացում (այդ թվում նաև նրա միջառարկայական բնույթը, կամ դաստիարակչական նշանակությունը):
- Առարկայի բովանդակությունն՝ ըստ նախատեսած ուսումնական պարապմունքների ձևերի և դրանց ծավալների:
- Առարկայի ուսումնամեթոդական ապահովումը, ներառյալ հիմնական և լրացուցիչ գրականության ցանկը և մեթոդական նյութերը՝ դասախոսի և ուսանողի համար:
- Ծրագրի յուրացմանը ներկայացվող պահանջները և գիտելիքների ստուգման միջանկյալ ու ամփոփիչ ստուգումների ձևերը:

3.2. Առարկայական դասընթացի ծրագիրը պետք է կազմված լինի համաձայն համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված ձևաչափի (հավելված 1):

Հավելված 1

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՖԱԿՈՒԼՏԵՏ _____

ԱՄԲԻՈՆ _____

"ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ"

Պրոռեկտոր / /

"____"_____2020թ.

_____*առարկայի*

Դասընթացի ծրագիր

Կրթական ծրագիրը	*Բուժական գործ*
Մասնագիտությունը	*Բժշկություն*
Կիսամյակը	*___-րդ , աշնանային/գարնանային*
Կրեդիտների քանակը	_____
Շաբաթական ժամերի ընդհանուր քանակը	_____*ժամ*
Ժամերի բաշխումն ըստ պարապմունքների ձևերի	*Դասախոսություն՝ ____ ժամ, գործնական՝ ___ժամ, ինքնուրույն ___ժամ /համաձայն ուսպլանի/*

ԵՐԵՎԱՆ – 2020

1. Դասընթացի նպատակը	*Օրինակ Ուսանողների մոտ ընդլայնել և ձևավորել գիտելիքներ _____ վերաբերյալ, ձևավորել կարողություններ _____ պայմաններում վերլուծելու _____ զարգացման ընթացքը, կրած փոփոխությունները, նրա սոցիալական բովանդակությունը, ձևավորել հմտություններ մասնագիտական գործունեության ընթացքում իրականացնելու, ներդնելու ձեռքբերված գիտելիքները և այլն:*
2. Դասընթացի խնդիրները	*1. _____* *2. _____* *3._____*
3. Դասընթացի ուսուցման նախապայմանները	***Նախապայմաններ – / ցանկալի է գրել վերջնարդյունքներով/ օրինակ ունենա գիտելիքներ այս կամ այն ոլորտներից և այլն:***
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները	*ԿՎ1.* ԿՎ 2. Ցանկալի է առավելագույնը լինի 10 կրթական վերջնարդյունք
5. Դասընթացի կրթական վերջնարդյունքների համապատասխանությունը ՄԿԾ-ի ակնկալվող վերջնարդյունքներին/	*Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.առավելագույնը 4-ը, նվազագույնը 2-ը* ***<u>1. այստեղ գրվում է տվյալ ՄԿԾ-ի վերջնարդյունքներից, որոնք ըստ Ձեզ համապատասխան են</u>***
6. Դասընթացի կառուցվածքը	*Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.* *ԹԵՄԱ 1.* *ԹԵՄԱ 2.* *ԹԵՄԱ 3.* *ԹԵՄԱ 4.* *ԹԵՄԱ 5.* *և այլն, համաձայն Ձեր առարկայի բովանդակությունից*
7. Դասընթացի օրացուցային պլանը	***Ներկայացվում է հավելվածի տեսքով:***
8. Դասընթացի վերջնարդյունքների ձեռքբերումը ապահովող դասավանդման և ուսումնառության մեթոդները	*Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները./ նշված են որպես օրինակ* *1. <u>Դասախոսը լսարանում կարդում է դասախոսություն, կազմակերպում է էլեկտրոնային դասախոսություններ, լսարանային քննարկումներ և ներկայացում տարբեր խնդիրների լուծման իրավիճակներ:</u>* *2. <u>Գործնական պարապմունքների ժամանակ քննարկվում, վերլուծվում են դասախոսություններում շարադրված դասընթացի առանձին բաժինները: Մշակվում են գործընթացի պլանավորման և իրականացման տարբեր իրավիճակներ:</u>* *3. <u>Ուսանողները լսարանում ունկնդրում են դասախոսություն և մասնակցում քննարկումներին:</u>* *4. <u>Լսարանից դուրս ուսանողը ինքնուրույն ուսումնասիրում է հանձնարարված գրականությունը, խնդիրների լուծման համար իրականացնում համեմատական վերլուծություններ:</u>*
9. Դասընթացի վերջնարդյունքների ձեռքբերումը գնահատելու մեթոդները/միջոցները	*Ինքնուրույն աշխատանքներ, սեմինարներ և ամփոփիչ քննություն:* *Դասընթացի ընթացքում կատարվում են հետևյալ պարբերական ստուգումները՝* *1. Ինքնուրույն աշխատանքներ՝ ____միավոր* *2. Ընթացիկ, ամփոփիչ ստուգումներ (քննություն)՝ _____միավոր* *3. Հաճախումներ՝ _____ միավոր* 1. միջանկյալ ստուգումները իրականացվում են կիսամյակի

	ընթացքում, բանավոր և գրավոր աշխատանքների միջոցով: 2. Եթե ուսանողը միչ ամփոփիչ քնությունը ընթացիկ ստուգումներից չի հավաքել անհրաժեշտ միավորներ, ապա ամփոփիչ քննությունը պետք է հանձնի 0-___ միավոր /գրավոր և բանավոր/: Քննական տոմսի առաջին և երկրորդ հարցերը բանավոր, յուրաքանչյուրը ___ միավոր առավելագույնը: Երրորդ հարցը գրավոր ___ միավոր առավելագույնը:/ 3. Ինքնուրույն աշխատանքները – հաստատված թեմաների շուրջ գրում են ռեֆերատներ, կազմում են շնորհանդեսներ և ներկայացումներ: /Առնվազն երկու ինքնուրույն աշխատանք, յուրաքանչյուրը առավելագույնը ___ միավոր/: Բարձր միավոր ստանալու համար ուսանողը պետք է ներկայացնի _ աշխատանք՝ ռեֆերատ, շնորհանդես: 4. Սեմինարները – ընթացիկ ստուգվում են դասախոսությունների և գործնական պարապմունքների ժամանակ ստացված գիտելիքները: Գնահատվում է ուսանողների ինքնուրույն կատարած աշխատանքները, նրանց մոտ մենեջերի մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման աստիճանը:
10. Օգտագործվող գրականության ցանկը	1. ՄՄՄՄ 2. ՄՄՄՄ 3. ՄՄՄՄ

ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՎԱՎՈՐՄԱՆ ՔԱՐՏԵԶ

	ԿՎ 1	ԿՎ 2	ԿՎ 3	ԿՎ 4	ԿՎ 5	ԿՎ 6	ԿՎ 7
Թեմա 1	+		+				
Թեմա 2		+				+	+
Թեմա 3	+	+		+			
Թեմա 4				+	+		+
Թեմա 5	+	+					
Թեմա 6						+	+
Թեմա 7				+	+		

ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

	Դասավանդման մեթոդներ	Ուսումնառության մեթոդներ	Գնահատման մեթոդներ
ԿՎ 1	Դասախոսություն	Քննարկումների մասնակցություն	Ընթացիկ ստուգումներ, սեմինարներ
ԿՎ 2	Դասախոսություն, շնորհանդեսներ, քննարկումներ:	Քննարկումների կազմակերպում գրականության վերլուծություն	Ընթացիկ ստուգումներ, սեմինարներ
ԿՎ 3	Դասախոսության, գործնական և մեթոդական պարապմունքներ	Քննարկումներ, տարբեր իրավիճակների վերլուծություն	Ինքնուրույն աշխատանքների ներկայացում, սեմինարներ
ԿՎ 4	Քննարկումներ, գործնական և մեթոդական պարապմունքների անցկացում	Քննարկումների մասնակցություն, արդյունքների վելլուծություն	Միջանկյալ ստուգումներ, սեմինարներ
ԿՎ 5	Դասախոսություն, գործնական և մեթոդական պարապմունքների անցկացում	Գրականության վերլուծություն	Միջանկյալ ստուգումներ
ԿՎ 6	Դասախոսություն, ֆիլմերի դիտում	Քննարկումներ, վերլուծություններ	Սեմինարներ

ԿՎ 7	Գործնական և մեթոդական պարապմունքներ	Գրականության վերլուծություն, բանավեճեր, անհատական աշխատանքներ	Միջանկյալ ստուգումներ, սեմինարներ

ՀԱՎԵԼՎԱԾ

Դասընթացի օրացուցային պլանը

Շաբաթ	Դասընթացի բաղադրիչները		
	Դասախոսություն	Գործնական կամ մեթոդական	Ինքնուրույն աշխատանք
	Աշնանային I կիսամյակ		
1			
2			
3			
4			
5			
6			
7			
8			
9			
10			
11			
12			
13			
14			
15			
16			
17	Սեմինար		

Ծրագրի հեղինակ՝ /_____/

/_____/

Գրախոս՝ /_____/

Ծրագիրը քննարկվել և հավանության է արժանացել՝

_____ ամբիոնի "___"_____ թիվ _____ նիստում

Ամբիոնի վարիչ (գիտ. Աստիճան, կոչում)՝ /_____/

_____ ֆակուլտետի խորհրդի "___"_____թիվ _____ նիստում

Ֆակուլտետի դեկան՝ /Ա.Ն.Կարապետյան /